**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# ՈՐՈՇՈՒՄ

<<20------>> <<փետրվարի------ >> **2026թ.** **N ՄՊ/101-Ա**

**Ք.Արմավիր**

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N1910-Ն որոշման N 9.1 հավելվածը՝ ըստ կրթական ծրագրերով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացված գումարները և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն որոշումը՝*

***որոշում եմ՝***

1. *Հայաստանի Հանրապետության 2026 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին «Նախադպրոցական կրթություն» ծրագրով փնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով ինը ամիսների համար նախատեսված 41023300 (քառասունմեկ միլիոն քսաներեք հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 33782100 (երեսուներեք միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը նախադպրոցական*

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 060-90-10-10, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

հասրապրություններն սոցիալական որոշ խմբերի երեխաների թվին համապատասխան վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի թվով 6/վեց/ համայնքներին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ Ա. Հովհաննիսյանին ՝ կնքել գումարի հատկացման պայմանագրեր :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 060-90-10-10, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզպետի

2026 թվականի փետրվարի 20-ի

N ՄՈ/ 101-Ա որոշման

# ՑԱՆԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

| Հ/Հ | Համայնքի անվանումը | Գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1 | Վաղարշապատ | 15257,7 |
| 2 | Արաքս | 3573,7 |
| 3 | Փարաքար | 3566,0 |
| 4 | Արմավիր | 5213,6 |
| 5 | Մեծամոր | 2950,0 |
| 6 | Բաղրամյան | 3221,1 |
|  | Ընդամենը | 33782,1 |

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ